

ԹՈՂԱՐԿՄԱՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

18.11.2022թ.

**«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

Անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային, ոչ փոխարկելի պարտատոմս

Թողարկողի և թողարկվող արժեթղթերի վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ձեռքբերման համար անհրաժեշտ է համատեղ դիտարկել ծրագրային ազդագիրը (գրանցված է ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի 07 հոկտեմբերի 2022թ. թիվ 1/489 Ա որոշմամբ, դրա լրացումները և սույն թողարկման վերջնական պայմանները: Ծրագրային ազդագիրը, դրա լրացումները գտնվում են «Այդի Բանկ» ՓԲԸ-ում, ՀՀ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13 հասցեում, www.idbank.am կայքում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
(Այն տեղեկությունները, որոնք կիրառելի չեն, նշվում է «ոչ կիրառելի»: Եթե միևնույն սերիայի ներքո տարբեր հիմնական պայմաններով (թողարկման արժույթ, առաջարկի գին, անվանական արժեք և այլն) արժեթղթեր են թողարկվում, ապա յուրաքանչյուր պայմանին բավարարող արժեթղթերի խմբի համար տարբերվող պայմանները ներկայացվում են տարանջատված:)		
1.	Թողարկողը (Թողարկողի անվանումը)	«Այդի Բանկ» ՓԲԸ
2.	Երաշխավորողը	Թողարկողը չի նախատեսում ներգրավել երաշխավոր
3.	Սերիան (տվյալ ծրագրային ազդագրի հիման վրա իրականացվող հերթական թողարկման համարը և տարեթիվը)	Տրանշ 3
4.	Տվյալ սերիայի թողարկման ընդհանուր ծավալը	5,000,000 (հինգ միլիոն) ԱՄՆ դոլար
5.	Արժեթղթերի դասակարգման մասին տեղեկատվություն՝ Թողարկողի պարտավորությունների մարման հերթականության տեսանկյունից (ստորադասությունը), ներառյալ՝ տվյալ սերիայի ներքո յուրաքանչյուր թողարկման ծավալը՝ ըստ ստորադասության	Թողարկողի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարվելուց հետո: Առաջարկվող պարտատոմսերի դեպքում սեփականատերերի պահանջները

		<p>կբավարարվեն «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի ա) և բ) ենթակետերով սահմանված պահանջները բավարարելուց հետո: Կազմակերպության պարտավորությունների մարման հերթականության</p> <p>տեսանկյունից պարտատոմսերից բխող պահանջները ենթակա չեն վերադասակարգման:</p>
6.	Թողարկման արժույթը	ԱՄՆ դոլար
7.	Առաջարկի գինը	<p>Պարտատոմսերի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ՝</p> $DP = \frac{C}{f} \sum_{t=1}^N \frac{1}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{t-1+\tau}} + \frac{100}{\left(1 + \frac{y}{100 * f}\right)^{N-1+\tau}}$ <p>որտեղ՝ $\tau = \frac{DSN}{DCC}$</p> <p>DP՝ պարտատոմսի գինն է,</p> <p>DSN՝ գործարքի կատարման օրից (settlement/trade date) մինչև հաջորդ արժեկտրոնի վճարումը մնացած օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,</p> <p>DCC՝ գործարքին նախորդող արժեկտրոնի վճարման օրից մինչև գործարքին հաջորդող արժեկտրոնի վճարման օրերի քանակ համապատասխան պայմանականության դեպքում,</p> <p>f՝ արժեկտրոնի վճարման հաճախականությունն է (4 եռամսյակային վճարումների համար),</p>

		<p>N` հաշվարկման պահին մնացած արժեկտրոնների վճարումների թիվը,</p> <p>C` տարեկան արժեկտրոնը 100 միավոր անվանական արժեքի դիմաց,</p> <p>Y` մինչև մարում եկամտաբերություն:</p> <p>Տեղաբաշխման ընթացքում պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր օրվա համար հրապարակվում է Թողարկողի կայքում:</p>
8.	Անվանական արժեքը	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար
9.	Քանակը	50 000 (հիսուն հազար) հատ
10.	Առաջարկի իրականացման սկիզբը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	28 նոյեմբերի 2022թ.
11.	Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	24 փետրվարի 2023թ. Եթե պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչև այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ վաճառվել է վերջին պարտատոմսը:
12.	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (ISIN) կամ այլ նմանատիպ տարբերակիչ ծածկագիր	AMANLBB2KERO
13.	Թողարկման և տեղաբաշխման վերաբերյալ որոշում ընդունած իրավասու մարմինը և որոշման ամսաթիվը (լրացվում է այն դեպքում, եթե տվյալ հրապարակային առաջարկի համար առանձին որոշում է ընդունվել, հակառակ դեպքում նշվում է «ոչ կիրառելի»)	«Այդի Բանկ» ՓԲԸ Խորհրդի 2022թ. օգոստոսի 23-ի թիվ 10 որոշումը: «Այդի Բանկ» ՓԲԸ վարչության 2022 թվականի նոյեմբերի 18-ի N 364-Լ որոշումը:
ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
14.	Արժեկտրոնի հաշվարկման առաջին օրը	28 նոյեմբերի 2022թ.
15.	Արժեկտրոնի տոկոսադրույքը և վճարման պարբերականությունը, եթե արժեկտրոնի տոկոսադրույքը լողացող է, ապա ներկայացնել տեղեկատվություն, թե ինչ ցուցանիշից (դրա փոփոխությունից) է կախված տոկոսադրույքի մեծությունը, և որտեղ կարելի է ստանալ այդ ցուցանիշի/դրա փոփոխության մասին տեղեկատվություն	3.75% (երեք ամբողջ յոթանասունհինգ) տոկոս անվանական տոկոսադրույք և 3 (երեք) ամիս վճարման պարբերականությամբ:
16.	Արժեկտրոնի վճարման հստակ օրերը (օր, ամիս, տարի)	Արժեկտրոնի հաշվարկման օրերն են՝ 28.02.2023թ., 28.05.2023թ., 28.08.2023թ., 28.11.2023թ., 28.02.2024թ., 28.05.2024թ., 28.08.2024թ., 28.11.2024թ., 28.02.2025թ., Արժեկտրոնի վճարումները կատարում են արժեկտրոնի հաշվարկման օրերին՝ բացառությամբ այն դեպքերի երբ արժեկտրոնի հաշվարկման օրը ոչ աշխատանքային օր է.

		նման դեպքում արժեկտրոնը վճարվում է արժեկտրոնի հաշվարկման օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
17.	Արժեկտրոնի օրերի հաշվարկման կարգը (օրինակ 30/360, Act/Act, Act/360 և այլն)	Փաստացի օրեր արժեկտրոնի փոփոխություն/ Փաստացի օրեր տարվա ընթացքում (Actual/Actual)
18.	Լողացող արժեկտրոնի հաշվարկն իրականացնողը	Ոչ կիրառելի
19.	Արժեկտրոնի հաշվարկման այլ էական պայմաններ	
20.	Զրոյական արժեկտրոնով (զեղչատոկոսային) արժեթղթերի վերաբերյալ դրույթ (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
ՄԱՅՐ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
21.	Մարման (մասնակի մարումների) ժամկետը	Պարտատոմսերը մարվելու են 2025թ.-ի փետրվարի 28 -ին: Պարտատոմսերի մարման գումարները պարտատոմսերի սեփականատերերին/անվանատերերին վճարվում են պարտատոմսերի մարման օրը: Եթե մարման օրը ոչ աշխատանքային օր է, ապա մարման գումարները վճարվում են մարման օրվա հաջորդող աշխատանքային օրը:
22.	Մարման (մասնակի մարումների) արժեքը, եթե հնարավոր չէ, ապա նշվում է հաշվարկման մեթոդաբանությունը	100 (հարյուր) ԱՄՆ դոլար
23.	Մարման արժեքի փոփոխությունը (լրացվում է այն բոլոր պայմանները, որոնց դեպքում հնարավոր է մարման արժեքի փոփոխություն)	Չի նախատեսվում
24.	Վաղաժամկետ մարման հնարավորություն Թողարկողի նախաձեռնությամբ/քոլ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	<i>Ժամկետ(ներ)ը</i>	
	<i>Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում)</i>	
	<i>Մասնակի մարման հնարավորության դեպքում՝ նվազագույն և առավելագույն մարման արժեքը</i>	
	<i>Այլ տեղեկություններ</i>	
25.	Վաղաժամկետ մարման հնարավորություն ներդրողի նախաձեռնությամբ/փոփ օպցիոն (նշվում է «կիրառելի» կամ «ոչ կիրառելի»)	Ոչ կիրառելի
	<i>Ժամկետ(ներ)ը</i>	

	Օպցիոնի իրականացման գինը, դրա հաշվարկման մեթոդը (առկայության դեպքում),	
	Այլ տեղեկություններ (տեղեկացման ժամանակաշրջանը)	
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
26.	Տեղաբաշխողի անվանումը, գտնվելու վայրը	«Այրի Բանկ» ՓԲԸ, ք. Երևան, 0010, Վարդանանց 13
27.	Տեղաբաշխման այլ պայմաններ (որոնք ներառված չեն ազդագրում)	
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
28.	Տվյալ դասի արժեթղթերի կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության առկայություն (նշվում է համապատասխան կարգավորվող շուկաների անվանումները, թույլտվության ամսաթիվը)	Արժեթղթերը դեռ չեն թույլատրված կարգավորվող շուկայում առևտրի
29.	Եթե առաջարկվող արժեթղթերի մասով հետագայում հայցվելու է կարգավորվող շուկայում առևտրին թույլտվություն, ապա նշվում է տեղեկություններ այդ մասին (շուկայի անվանումը, նաև դրույթ, որ առևտրին թույլտվության հայցը կարող է չբավարարվել, առևտրին թույլտվության սպասվող ամսաթիվը (հնարավորության դեպքում))	Համաձայն Ազդագրի 2.5.1 կետի Թողարկողը դիմելու է պարտատոմսերը կարգավորող շուկայում ցուցակելու համար, և ՀՀ գործող օրենսդրության պարտատոմսերի ցուցակման դեպքում վերջիններիս հետագա շրջանառությունը կարող է իրականացվել միայն կարգավորող շուկայում: Կարգավորվող շուկա ասելով Թողարկողը նկատի ունի "Հայաստանի Ֆոդային Բորսա" ԲԲԸ-ն
30.	Արժեթղթի վարկանիշը	Արժեթղթերը վարկանշված չեն:
31.	Արժեթղթերի դիմաց վճարներ կատարելու մեթոդները (պարբերականությունը, բանկային հաշիվները և այլն) և ժամկետները, ինչպես նաև արժեթղթերը ստանալու մեթոդները և ժամկետները, արժեթղթերի սեփականության վերաբերյալ քաղվածք ստանալու ձևը	Թողարկողի կողմից թողարկվող պարտատոմսերի ձեռքբերման համար իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք վճարումը կատարում են թողարկման նպատակով «Այրի Բանկ» ՓԲԸ-ում բացված 11800082588500 տարանցիկ հաշվեհամարին:

Թողարկողը պատասխանատու է սույն «Թողարկման վերջնական պայմաններում» ներառված տեղեկությունների համար: Թողարկողը հավաստիացնում է, որ սույն փաստաթղթում ներառված տեղեկությունները համապատասխանում են այն տեղեկություններին (ներկայացված ընդհանուր մեթոդաբանությանը), որոնք ներառված են ծրագրային ազդագրում, դրա լրացումներում, ինչպես նաև ճշգրիտ են (այնքանով, որքանով հայտնի են), և որևէ փաստ բաց չի թողնվել կամ խեղաթյուրվել:

Միեր Աբրահամյան «Այդի Բանկ» ՓԲԸ վարչության նախագահ		
Արման Ասատրյան «Այդի Բանկ» ՓԲԸ ֆինանսական տնօրեն, վարչության անդամ		
Ռաֆիկ Սուվարյան «Այդի Բանկ» ՓԲԸ Ռիսկերի կառավարման գծով տնօրեն, վարչության անդամ		
Անուշիկ Խաչատրյան «Այդի Բանկ» ՓԲԸ գլխավոր հաշվապահ, վարչության անդամ		
Տիգրան Մխիթարյան «Այդի Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի տնօրեն, վարչության անդամ		
Կարեն Նալբանդյան «Այդի Բանկ» ՓԲԸ Բիզնեսի զարգացման տնօրեն, վարչության անդամ		
Սերգեյ Առաքելյան «Այդի Բանկ» ՓԲԸ Թվային Բանկինգի տնօրեն, վարչության անդամ		
Լիլիթ Գրիգորյան «Այդի Բանկ» ՓԲԸ Գործառնական տնօրեն, վարչության անդամ		

Ստորագրությունները վավերացնում են՝

Միեր Աբրահամյան

«Այդի Բանկ» ՓԲԸ

Վարչության նախագահ

(ստորագրություն)

(ամսաթիվ)